

Մ Ա Մ Կ Ա Ն Ե Ձ Ո Ւ Ն Ե Ր

Ջաւախքի, Ախալցխայի և Աղէքսանդրապօլի թէ քաղաքացի և թէ գիւղացի երեխաները, ինչպէս և երբեմն չափահասները, միմեանց հետ խօսում են ծածկալեզուներով: Ով չէ ըմբռնել այդ ծածկալեզուների զաղտնիքը և չէ վարժուել, չի կարող ո՛չ հասկանալ և ոչ խօսել:

Այս ծածկալեզուները նայելով իրենց բաղադրիչ մասնիկին՝ կոչւում են. ըծեվար (ըծերէն), ըվեվար, ըլբեվար, ըխկեվար:

Սրանց բոլորի զաղտնիքը կայանում է նրանում, որ բառի ամեն մի ձայնաւորի առաջ, աւելացնում են ծածկալեզուն կազմող մասնիկը, եթէ ըծեվար է՝ ըծ, ըվեվար՝ ըվ, ըլբեվար ըլբ, ըխկեվար՝ ըխկ:

Օրինակ՝ Արի էրթանք կալը խաղանք.

Ըծեվար՝ ըծարըծի ըծէրթըծանք կըծալըծը խըծաղըծանք:

Ըվեվար՝ Ըվարըվի ըվէրթըվանք կըվալըվը խըվաղըվանք:

Ըլբեվար՝ Ըլբարըլբի ըլբէրթըլբանք կըլբալըլբը խըլբաղըլբանք:

Ըխկեվար՝ Ըխկարըխկի ըխկէրթըխկանք կըխկալըխկը խըխկաղըխկանք.

Կան նաև այնպիսիներ, որ բառերը երկու մասի են բաժանում, և երկրորդ մասը առաջ դնում.

Օրինակ՝ նոյն նախադասութիւնը կը լինի.

Բի-ա, թանք-էր լը-կա զանք-խա:

Ոմանք էլ բառերի տառերն են արտասանում իրենց ամբողջ հնչիւնով:

Օրինակ՝ նոյն նախադասութիւնը կը լինի՝

Այբ, բէ, ինի. է, բէ, թօ, այբ, նու, քէն. կէն, այբ, լիւն, եթ, խէ. այբ, զատ, այբ, նու, քէն:



Պղնձե, անօթներ.